

Հնումը այս գաւառը կազմում էր մեծ մասամբ Սիւնեաց նահանգի Գեղարքունիք ու Սող կամ Սոթք, և Արարատեան նահանգի Վարաժնունիք, Արեւելեան Նիգ և Մազազ գաւառները: Գեղարքունիքը համարւում էր Սեանայ լճի արեւմտահարաւային ափերը, որ ստորաբաժանւում էր Մակ-գաւառ և Կոթ կամ Կըռ-դաբակ գաւառակների. առաջինը բռնւում էր լճի արեւմտեան, ժմակային մասը (որի հակառակ՝ արեւելահայեաց մասը կոչուել է Արեգունի, Գիւնէյ), իսկ երկրորդը՝ հարաւային մասը: Սոթք գաւառը բռնել է լճի արեւելեան և հիւսիսային մասը և ստորաբաժանուել է՝ բուն Սողի՝ որ բռնել է այժմեան Զոդի դաշտավայրը, Արտից-գաւառի կամ Ծարի, այժմեան Մազրայի դաշտավայրը, Փորակի, որ հաւանօրէն ընկել է Սողի և Արտից-գաւառի միջև, այժմեան Գիւլի գետի և լճակի մասը, Երիշատի, որ հաւանօրէն այժմեան Ելիշա Կարակոյիւնլու գիւղի և նրա շրջակայքն է բռնել և Ջաղացաձորի, որի տեղը նոյն իսկ հաւանօրէն յայտնի չէ:

Լճի հիւսիս-արեւելեան ափերը ևս, որ յայտնի է Արեգունի կամ այժմ Գիւնէյ անունով, հաւանականօրէն Սոթքի մի գաւառակն է կազմել:

Արարատեան նահանգից Վարաժնունիքը բռնել է դաւառի արեւմտահիւսիսային մասը, այժմեան Դարաշիշակը կամ Ծաղկաձորը, Արեւելեան Նիգը՝ նրա արեւմտեան սահմանը՝ այժմեան Բջնի գիւղը, և Մազազը՝ գաւառի արեւմտահարաւային մասը՝ այժմեան Քեանքեանի գիւղական հասարակութիւնը:

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏ ՔԱՂԱՔ

Գաւառի կենդրոնը համարւում է Նոր-Բայազէտ քաղաքը: Սա տեղաւորւած է Սեանայ լճի արեւմտեան ափին, ($62^{\circ} 47' 20''$ — $40^{\circ} 21' 25''$) նրանից մօտ 6 կիլոմետր հեռու, մի զոգաւորութեան մէջ: Բռնւում է 96 դես. 2216 ք. ս. տարածութիւն, որից 82 դես. 1344 ք. ս. ծածկուած է շինութիւններով: Քաղաքի հարաւային կողմում հոսում է Քաւառ գետը կամ Գաւառագետը, որի վրայ մի քարաշէն կամուրջ կայ, 1867 թուին Գ. Գորոյեանի ծախքով կառուցուած: Գետի ձախ ափին և քաղաքի արեւելահարաւային կողմում բարձրանում է մի բլուր, որի վրայ հնումը եղել է մի ամրոց, իսկ յետոյ և այժմ դերեղմանատուն: Դեռ ևս նկատուի են այդ հին ամրոցի հետքերը. կայ նաև մի ստորերկրեայ անցք, որ աւանդութեան ասելով ամրոցի միջից իջել է մինչև գետը: Բլրի վրայ մնացել են հին շինութեան հետքեր,

կայ նաև մի փոքրիկ մատուռ *ս. Ստեփանոսի անունով*, որի արեւելեան որմին կից մի խաչքարի պատուանդանի վրայ արձանագրուած է.

՚ի թուին ԲՃՂԱ (=842).

Եւ Ամիր Վասակ որդի Վասիլ ի2 (խանի) շինեցի զեկեղեցիս, և զԳաւառայն առուն հանեցի Կնի... ձորերէն և սարերէն: Բնակիչք գիւղիս խոստացան տարին Գ. ժամ. կատարողք աւրհնին յԱստուծոյ:

Մի փոքրիկ, հասարակ մատուռ ևս բանձրանում է Մկրտիչ աղա Արծրունու, 1829 թ. գաղթականութեան առաջնորդի, գերեզմանի վրայ:

Հին գերեզմանների վրայ կան բաւական գեղեցիկ և ուշագրաւ խաչարձաններ՝ հետեւել տալանազրեբով.

Ա. խաչքարերի վրայ.

ա. Սուրբ խաչս բարեխաւս Ստեփաննոս եպիսկոպոսին թվ. ԶԿԲ. (=1513):

բ. Այս է հանգիստ Լալաին, որդի Միրզին, եղբայր Աստուածատուրին, որ փոխեցաւ ի Քրիստոս թվին ԶԶԱ. (=1532):

գ. Սուրբ խաչս բարեխաւս Ղարիպին և Բէկին և մասն Մամա խաթունին. թվին ԶԶԶ (=1537):

դ. Շնորհին Աստուծոյ կանգնեցաւ խաչս փրկութեան հոգւոյն պարոն Հիկնին, թվին ԶՂԷ (=1548):

Նոյն խաչի հարաւային կողմում.

Սուրբ խաչն բարեխաւս պարոն Գուլաղին:

ե. Մի գեղեցկաքանդակ խաչարձանի վրայ.

Թ. Ռ. (=1551). Սուրբ խաչս բարեխաւս Յովհաննէս երիցու:

զ. Սուրբ խաչս բարեխաւս պարոն Կուլ Աղին. թվին ՌԻԶ. (=1571) Տրդատ կազմողս թերատաշ:

է. Սուրբ նշանս տէրունական պահապան է պարոն Աստուածատուրին, ՌԻԶ (=1577). Յիսուս Քրիստոս Տէր Աստուած:

ը. Սուրբ նշանս բարեխաւս Հախնազարին. թվին ՌԽԾ (=1596). Քիրամ կազմող:

Թ. Սուրբ խաչս բարեխաւս Դաւլաթին. Թվին Ռոնե (=1596).

ժ. Կանգնեցաւ խաչս փրկութեան Թուման աղային, որ է որդի Սարուր աղային. Թուին Ռոնե. (=1596).

ժա. Սուրբ խաչս բարեխաւս Գիւլ աղային. Թուին Ռոնե (=1597).

Առանց Թուականի

ժբ. Սուրբ խաչս բարեխաւս պարոն Ջահան Աղին:

ժգ. Սուրբ խաչս բարեխաւս պարոն Թաջումին. Առաքել և Մելքիսէթ կազմող:

Բ. Տապանաքարերի վրայ

ա. Մի դազադաձև տապանաքարի վրայ նկարուած է մի Թագակիր անձ, ներքևում արձանադրուած.

Այս է հանգիստ Փիրի պէկին, որ է որդի Թուման աղին և պարոն Հեղինէին ՋլԱ Հայոց Թվին (=1482).

բ. Այս է հանգիստ Շաղուբաթ աղային, որ էր տաւուտէր Գաւառին. փոխեցաւ առ Բրիստոս. սուրբ խաչս բարեխաւս Շաղուբաթ աղային. Թուին ՋՄԳ. (=1504.)

գ. Այս է հանգիստ Աստուածատուր աղային, որդի Միրանշին. ՋՀԳ. (=1524).

դ. Այս է հանգիստ Փիրի բէկին, որդի Թուման աղային ՋՂ (=1541).

Քաղաքը բաժանուած է չորս թաղի. Բանտի, Կալերի, Տալիզի և Պաշերի: Առաջինը իւր անունն ստացել է այն հանգամանքից, որ տարածուած է գետի այն մասում, ուր ձկներ որսալու համար բանտ—ջրի մէջ քարէ պատնէշ—է շինուած: Սա քաղաքի ամենահին մասն է, և եթէ առաջին զաղթականները Նինովկայի կամ Նորադուղի պէս հրաշալի, լճափնեայ տեղերը թողել են ու եկել այստեղ բնակութիւն հաստատել, դրա պատճառն այն է եղել, որ աւելի հեշտութեամբ են կարողացել այս գետի մէջ ձուկ որսալ, քան լճի և մէկ էլ հիանալի գեղարքունին զխաւորապէս այս գետումն է լինում: Այս թաղում կայ ս. Կարապետ անունով մի հասարակ եկեղեցի և մի փոքրիկ մատուռ: Վերջինիս մօտից բղխում է երկաթաջուր, որին ժողովուրդը Վաթնաղբիւր է անուանում և սուրբ, բուժիչ, համարում:

Քաղաքի այս թաղը ամենահինը լինելով զուրկ է կանոնաւոր, լայն փողոցներից, տների մեծազոյն մասն էլ շատ հասարակ

և դիւղական է: Նոր-նոր շինւում են երոպական ձեի տներ: Բաւական հաճելի է գետի երկու ափը, ուր բարձրանում են ուռենիներ ու բարդիներ, որոնց հովանու տակ յաճախ թէյ խմելու են գալիս քաղաքացիները:

Կալերի թաղը նոր մասն է, և այսպէս է կոչւում, որովհետև մօտիկ անցեալում այդտեղ կալեր են եղել: Սրա գրեթէ կենտրոնում դառնում է քաղաքային այգին, պարսպապատ, բայց ոչ ծառազարդ, որովհետև կոպիտ ամբոխը ներկայ դաւառապետի տնկել տուած 300 ծառերը կոտրատել տարել էր: Այդու միակ զարդը մի յորդ աղբիւր է: Այս այգուն կից է ոռոտաց փոքրիկ, միմիայն մի զանգազատնով զարդարուած, անգամբէթ եկեղեցին, որ շինել է քաղաքը իւր հաշւով, հաւատարմով, որ այսպիսով թոյլ չի տալ իւր փոխարէն նշննովկա գիւղը քաղաք դարձնելու:

Ներկայ 1908 թուին այս այգու մէջ սկսեցին շինել հայոց եկեղեցական ծխական օրիորդաց և տղայոց դպրոցների շէնքեր և քաղաքային տուն, իսկ հասարակական այգու համար յատկացրին մի այլ տեղ՝ քաղաքի արևմտեան կողմում:

Այգու շուրջը կան միջանի լաւ, թիթեղապատ կտուրներով տներ, մինչդեռ միւս բոլոր տները հողածածկ են, տափարակ կտուրներով, մեծազոյն մասը մի յարկանի:

Այգուց փոքր ինչ հեռու գտնւում է Հայոց ս. Աստուածածին, նորակառոյց եկեղեցին, որ իսկապէս քաղաքի զարդը կարող է համարուել, շինուած է արժ. Խորէն վարդապետ Մուրադբէկեանի նախաձեռնութեամբ և ճարտարապետ Միրզոյեանի կազմած յատակագծով ու վերահսկողութեամբ:

Եկեղեցու առջև բղխում է մի աղբիւր. հիւսիսային կողմում բարձրանում է հայոց եկեղեցական-ծխական երկսեռ դպրոցների հին, հասարակ շէնքը:

Եկեղեցու հանդէպ բացւում է շուկան, ուր կայ հասարակական կշիռ և բաւականաչափ խանութներ: Կիրակի և տօն օրերը հասարակութիւնը այստեղ է խոնւում:

Տալիզի թաղը տարածւում է քաղաքի հարաւ-արևմտեան մասում: Սա այսպէս կոչուել է Տալիզա վրացի պաշտօնէի անուամբ, որ իբր զաւառապետ ¹⁾ կառավարել է 1835—1840 թ. և բաց արել այս թաղը: Այստեղ է գտնւում ոստիկանատունը մի ընդարձակ հրապարակով, քաղաքային միակ բուժարանը, քաղա-

¹⁾ Նոր-Բայազէտը Երևանեան գաւառի մաս կազմելով այստեղի կառավարիչները Երևանի գաւառապետի օգնական էին կոչւում:

քային պետական եռդասեան դպրոցը և փոքրիկ, նորաշէն բաղա-
նիսը, երկու հիւրանոց և այլն:

Յաջերի թաղը, որ իւր անունն ստացել է այդտեղ գտնուած
խաչարձաններից, ընկնում է քաղաքի արեւմտահիւսիսային մա-
սում և առատ է սառնորակ աղբիւրներով: Այստեղից են տա-
րուած քաղաքի բոլոր աղբիւրները և այստեղ են տարածուած
քաղաքի մի քանի պարտէզները, ուր առաւելապէս համարձման
ուրբաթ օրը և սովորաբար ամէն կիրակի զբօսնում է քաղաքի
ժողովուրդը և շագու ուտելու՝ գալիս: Օդի կողմից այս թաղն ա-
մենալաւն է: Նոր-նոր շինուած են գեղեցիկ, երկյարկանի տներ:

Քաղաքն ընդարձակուած է երեք ուղղութեամբ, մէկ այս
խաչերի կողմից դէպի Փաշաքեանդ գիւղը, որ և շատ շուտով կա-
րող է նրան միանալ. երկրորդ՝ Բանտի թաղի հանդէպ, դարի
գլխից դէպի Ղուլալի գիւղը: Արդէն գետի այս աջ ափին, բարձ-
րաժանդակի վրայ բաւականաչափ տներ են կառուցուել: Եւ եր-
րորդ՝ դէպի արևելք, Ս. Յովհաննիսի ուխտատեղին, որ մի հի-
նաւուրց, կռապաշտական սրբատեղի է:

Սրա մօտ, մի ահագին ժայռ քարի վրայ արձանագրուած է-
ի թվին ԶՂԱ. (=1549) Թոմայա ծառայ Աստուծոյ եկի
ի Գաւառէն ի ծառայութիւն սղւրբ Յովհաննէսին. շատ
աշխատեցայ. յիշեցէք ի Քրիստոս:

Քաղաքի փողոցները, որոնցից նորերը բաւական լայն են,
այս տարի են անուն ստացել:

Ոչ մի փողոց քարած չէ, այս պատճառով և կուրացուցիչ,
սարսափելի փոշին և նոյեան ցեխը անպակաս են: Մայթեր ե-
րևում են մի քանի գլխաւոր փողոցներում: Լապտերներ կան...
ընդամենը՝ 40 հատ, այնպէս որ գիշերները տիրում է ագաժայ
մութը:

Բնակիչները Հին-Բայազետ քաղաքից 1830 թուին զաղթած
հայեր են, ընդամենը 1328 տուն, 4978 ար. 4855 իգ. ի միասին
9833 հոգի: Բացի սրանցից կան նաև այլազգիներ՝ 1 տուն, 2 ար.
3 իգ. ի միասին 5 հոգի: Այնպէս որ քաղաքի ամբողջ ազգա-
բնակութիւնը բաղկացած է 1329 տնից. 4980 ար. 4858 իգ. միա-
սին՝ 9838 հոգի:

Բնակիչների մեծագոյն մասը պարապում է երկրագործու-
թեամբ և անասնապահութեամբ, իսկ փոքրագոյնը՝ վաճառկա-
նութեամբ, արհեստներով և ձկնորսութեամբ:

Բաւական մեծ թուով էլ պանդխտում են թիֆլիս՝ բաղա-
նիսներում ծառայելու իրր քիսածի, և կամ պարապում են առա-

ևելապէս հին և ընդհանրապէս հասարակ հանդերձեղէնի առևտրով:
 Քաղաքը ունի 6160 դ. 1697 ք. ս. վարելահող, 2 դ. 2112
 ք. ս. պարտէզ, 1545 դ. 480 ք. ս. խոտասեղի և 3075 դ. 2200
 ք. ս. արօտատեղի:

Կրպակների թիւը հասնում է հարիւրի: Նոյնքան կարելի
 է հաշուել և՛ արհեստաւորների կրպակները:

Քաղաքի բիւզժէն տատանւում է 9—11 հազար բուբուռ մի-
 ջև: Ունի քաղաքային ինքնավարութիւն, քաղաքային աւագ. սրահ
 օգնական և 15 իրաւաստներ:

Քաղաքում կան պետական քաղաքային եղապահան և մի դա-
 սեան, ինչպէս և հայոց եկեղեցական-ծխական երկդասեան երկ-
 սեռ ուսումնարաններ:

Այստեղ ճիւղեր ունին Հայոց Ազգազրական, Կովկասի հայոց
 Բարեգործական, Բագուի Կուլտուրական և Երևանի նահանգում
 պիտանի գիտելիքներ տարածող ընկերութիւնները: Հայոց Ազգա-
 զրական Ընկերութիւնը ունի մի գրադարան—ընթերցարան, որ
 նուէր է ստացել պ. Ստեփան Բաղիկեանից: Գրադարանը շուտով
 տեղաւորուելու է տղայոց դպրոցին կից կառուցուող երկու սե-
 նեակների մէջ, ուր հաւաքուելու են նաև հնագիտական իրեր:

Բարեգործական և Կուլտուրական ընկերութիւնների ճիւ-
 ղերը իրենց կենտրոնների միջոցներով և յաջորդ խորէն վարդա-
 պետ Մուրադբէկեանի եռանդուն միջամտութեամբ բացել են գա-
 ւառի գիւղերում եօթ ծխական-եկեղեցական միզասեան դպրոցներ:

Երևանեան նահանգում պիտանի գիտելիքներ տարածող ըն-
 կերութիւնը բացել է մի քանի գիւղերում գրադարաններ և կազ-
 մակերպում է հանրամատչելի դասախօսութիւններ:

